ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հայ Առաքելական Եկեղեցին դարերի ընթացքում սերնդե-սերունդ է փոխանցել մի գեղեցիկ ավանդություն. յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 25-ին՝ Սուրբ Ստեփանոս Նախավկայի տոնի օրը, հոգևոր հաստատության ուսանողության արժանավոր ներկայացուցիչները ստանում են սարկավագական ձեռնադրություն Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու սպասավորության համար:

Սակայն այս տարի մեր ժողովրդին պատահած հոգեցունց աղետի պատճառով խախտվեց այդ ավանդությունը, քանզի Ս. Էջմիածնի ողջ միաբանությունն ու ուսանողությունը լծված էին երկրաշարժից տուժածներին օգնելու գործին:

Մայիսի 7-ին, կիրակի.

Այսօր, ժամը 10.30 րոպեին, Մայր տաճարի Ավագ խորանի վրա սկսվում է տոնական Ս. Պատարագի արարողությունը:

Օրվա պատարագիչն է Մայր Աթոռի միաբան Տ. Նավասարդ աբեղա Կճոյանը:

Պատարագի Ս. Գրական ընթերցումներից առաջ սկսվում է հոգևոր ճեմարանի Ե լսարանի 7 ուսանողների սարկավագական ձեռնադրությունը՝ ձեռամբ Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի և խուրտավիլակությամբ Տ. Սեպուհ աբեղա Զուլջյանի:

Նորընծա սարկավագները ծնկաչոք բարձրանալով Ս. Խորան, ձեռքերը գրկաներից վեր բարձրացնելով «Ի տես ժողովրդեան» հրաժարվում են աշխարհիկ կյանքից:

Այդ նույն պահին դպրաց դասը «ի լուր ժողովրդեան» վկայում է «Աստուածային և երկնային շնորհ, որ միշտ լնու զպէտս սրբոյ սպասաւորութեան առաքելական եկեղեցւոյ, կոչէ զՅակոբ և զԳարսևան, զԿամոյ, զԱլուսանդ և զԷդուարդ, զՅովհաննէս և զՇահէն ի դպրութենէ ի սարկաւագութիւն ըստ վկայութեանց անձանց իւրեանց և ամենայն ժողովրդեան»:

Ձեռնադրող Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը Ս. Երրորդությանը ուղղված մեր բազմադարյան աղոթքները ընթերցելուց հետո նորընծա սարկավագներին իրավունք է շնորհում սարկավագական խորհրդանիշ ուրար կրելու, Ավետարան ընթերցելու, Սուրբ Խորանին և Պատարագին սպասավորելու համար:

Հետ ձեռնադրության գերաշնորհ սրբազան հայրը իր հայրական բարեմաղթանքներն ու շնորհավորական խոսքն է ուղղում նորընծաներին:

Մայիսի 8-ին նորընծա սարկավագները, գլխավորությամբ Տ. Հուսիկ արքեպիսկոպոսի, ճեմարանի տեսուչ Տ. Եզնիկ քհն.

Պետրոսյանի, վոխտեսուչ Տ. Սեպուհ աբեղա Չուլջյանի ներկայանում են Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ին: Ազգիս Հայոց Վեհափառ Հայրապետը իր օրհնությունն է տալիս 7 նորընծաներին և մաղթում, որ անդրանիկ 7 սարկավագների, հատկապես Ստեփանոս Նախասարկավագի օրինակով մինչև վերջ հաստատ մնան իրենց սրբազան ուխտի և հավատքի մեջ, Ալետարանի աստվածատուր լույսով լուսավորեն մարդկային խոպան հոգիները, անմնացորդ կերպով ծառայելով առաքելահաստատ Սուրբ Եկեղեցուն ու ժողովրդին:

ՀԱԿՈԲ ՍԱՐԿԱՎԱԳ ԻՍԿԵՆՅԱՆ

Ծնվել է 1965 թ. դեկտեմբերի 10-ին Սիրիայի Հալեպ քաղաքում:

1966 թ. մայիսին ընտանիքով ներգաղթել են Մայր Հայրենիք և բնակվել Լենինական քաղաքում:

1972—82 թթ. սովորել և ավարտել է տեղի Պետրոս Դուրյանի անվան միջնակարգ դպրոցը:

1982—83 ուս. տարում ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1984—86 թթ. ծառայել է խորհրդային բանակում, որից հետո շարունակել ուսումը հոգևոր ճեմարանում:

ԳԱՐՍԵՎԱՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԵՐԱՆՅԱՆ

Ծնվել է 1965 թ. մայիսի 9-ին Էջմիածնի շրջանի Դաշտ գյուղում:

1972—80 թթ. սովորել է տեղի ութամյա դպրոցում, իսկ 1980—82 թթ. ավարտել Էջմիածնի շրջանի Ծահուկյան գյուղի միջնակարգ դպրոցը:

1982—83 ուս. տարում ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1983—85 թթ. ծառայել է խորհրդային բանակում, որից հետո շարունակել ուսումը հոգևոր ճեմարանում:

ԿԱՄՈ ՍԱՐԿԱՎԱԳ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Ծնվել է 1964 թ. սեպտեմբերի 23-ին Աբովյանի շրջանի Գողթ գյուղում:

1971—81 թթ. սովորել և ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը:

1982—83 ուս. տարում ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1983—85 թթ. ծառայել է խորհրդային բանակում, որից հետո շարունակել ուսումը հոգևոր ճեմարանում:

ԱՎԱՆԴ ՍԱՐԿԱՎԱԳ ԶԱՐԳԱՐՅԱՆ

Ծնվել է 1966 թ. մայիսի 1-ին Պարսկաստանի Թեհրան քաղաքում:

1972 թ. ընտանիքով ներգաղթել են Մայր Հայրենիք:

1982 թ. ավարտելով Էջմիածնի № 10 միջնակարգ դպրոցը, ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1984—86 թթ. ծառայել է խորհրդային բանակում, որից հետո շարունակել է ուսումը հոգևոր ճեմարանում:

ԷԴՎԱՐԴ ՍԱՐԿԱՎԱԳ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

Ծնվել է 1965 թ. հուլիսի 21-ին Էջմիածնի շրջանի Աթարբեկյան գյուղում:

1972—82 թթ. սովորել և ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը:

1982—83 ուս. տարում ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1984—86 թթ. ծառայել է խորհրդային բանակում, որից հետո շարունակել է ուսումը հոգևոր ճեմարանում:

ՀՈՎՀԱՆՆԵՍ (ՋՈՆ) ՍԱՐԿԱՎԱԳ ԱՆՏՈՆՅԱՆ

Ծնվել է 1961թ. օգոստոսի 12-ին Երևան քաղաքում:

1968—78 թթ. սովորել և ավարտել է տեղի Հակոբ Պարոնյանի անվան միջնակարգ դպրոցը:

Մեկ տարի Երևանի Ռելեյի գործարանում աշխատելուց հետո, 1979—81 թթ. ծառայել է խորհրդային բանակում, որից հետո շարունակել է աշխատանքը նույն վայրում:

1984—85 ուս. տարում ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

ՇԱՀԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ ՄԱԶԼՈՒՄՅԱՆ

Ծնվել է 1963 թ. մարտի 31-ին Կահիրեում:

Նախնական կրթությունը ստացել է ամերիկյան նախակրթարանում, որն ավարտելուց հետո եկել է Մայր Հայրենիք և ընդունվել Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի էլեկտրոապարատների սարքավորման բաժինը:

Երկու տարի ուսանելուց հետո 1985 թ. դեկտեմբերին ընդունվել է հոգևոր ճեմարան:

* * *

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է նորընծա սարկավագներին, ողջունում նրանց Հայ Առաքելական Եկեղեցում զինվորագրվելու սրբազան ուխտը: